# Հավասարության սկզբունքը և խտրականության մարտահրավերները ՀՀ-ում

Աշխատաժողով



**Կազմակերպիչ՝** ՀՔԱ Վանաձորի գրասենյակ

**վայրը՝** Արթուրս Աղվերան Ռեզորթ, Աղվերան

**օրը՝** Ապրիլ 17-18, 2015 թվական

**Նպատակը՝**

Բարձրացնել ՀՀ Առողջապահության նախարարության նյարդահոգեբուժական հաստատությունների աշխատողների, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ծառայողների, փաստաբանների, լրագրողների և իրավապաշտպանների իրազեկվածության մակարդակը մարդու իրավունքների ոլորտում՝ հավասարության սկզբունքի, խտրականության դրսևորումների և մարտահրավերների մասին գիտելիքների զարգացման և փորձի փոխանակման միջոցով

**Աշխատաժողովի ձևաչափը՝**

Աշխատաժողովի ընթացքում տեղեն գտել ինչպես պլենար այնպես էլ խմբային քննարկումներ: Պլենար քննարկումների ընթացքում վարողների կողմից ներկայացվել են կարծրատիպերի տեսությունը, խտրականության տեսակները, անխատրականության ոլորտում առկա միջազգային կարգավորումները, խտրականությունից պաշտպանության հնարավորությունները ներպետական օրենսդրության մակարդակում, շահերի պաշտպանության, ջատագովության օրինակներ:



Խմբային քննարկումների ընթացքում մասնակիցների խմբերի կողմից վեր են լուծվել խտրականության ոլորտի իրավիճակային խնդիրներ:

Մեկ քննարկում նվիրված է եղել փորձագետների կողմից յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրների ներկայացմանը:

**Մասնակիցները՝**

- ՀՀ առողջապահության նախարարության և նյարդահոգեբուժական հաստատությունների ներկայացուցիչներ





- ՀՀ արդարադատության նախարարության ՔԿՎ և ՔԿՀ-ների ներկայացուցիչներ,
- փաստաբաններ,
- իրավապաշտպաններ,
- լրագրողներ:

**Աշխատաժողովի արդյունքները՝**

Աշխատաժողովի արդյունքում բարձրացավ մասնակիցների իրազեկվածությունը կարծրատիպերի, խտրականության համընդհանուր արգելքի, ներպետական օրենսդրության և դրա կիրառման ընթացքում առկա խնդիրների վերաբերյալ:

Աշխատաժողովի արդյունքում մասնակիցների կողմից կազմվեցին առաջարկություններ ուղղված առանձին ոլորտներում խտրականության արգելքը հաղթահարելուն: Մասնակիցների խմբերը բարձրացրեցին նախկին դատապարտյալների կողմից աշխատաշուկայում հանդիպող խտրական վերաբերմունքի, մեթադոնային բուժում անցնող դատապարտյալների՝ վաղակետ պայմանական ազատման, ընտանեկան բռնության, հենաշարժողական հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված միջավայրի բացակայության խնդիրները: Խմբերը նաև մշակեցին այս խնդիրների լուծմանն ուղղված իրենց առաջարկությունները ծրագրերը:

**Աշխատաժողովի գնահատման արդյունքները (ըստ մասնակիցների կողմից լրացված գնահատման թերթիկների, որտեղ 5 ցուցանիշը հանդիսանում է ամենաբարձր գնահատական, 1՝ ամենացածր)**

*(1)Աշխատաժողովի նպատակների իրականացումը*

1.Աշխատաժողովը հաջողությամբ խրախուսեց տեղեկատվության փոխանակումը և գաղափարների արտահայտումը մասնակիցների

Նման ծրագրերի առկայությունը շատ կարևոր է հատկապես պետական կառույցների ներկայացուցիչների համար: Խտրականության վերացմանն ուղղված ջանքերի համար պետք է ներդնել շատ ջանք: Շնորհակալություն:



միջև - 19 մասնակից գնահատել են 5, 5 մասնակից՝ 4, 1 մասնակից՝ 3:

2.Դասընթացը համակարգեց այն տեղեկատվությունը, որն ինձ անհրաժեշտ էր - 14 մասնակից գնահատել է 4, 11 մասնակից՝ 4:

3.Դասընթացի նպատակներն իրականացվել են – 11 մասնակից գնահատել է 5, 12 մասնակից՝ 4, 1 մասնակից՝ 3, 1 մասնակից՝ 1:

4.Թեմայի վերաբերյալ Ձեր գիտելիքներն մինչ այժմ – 9 մասնակից գնահատել է 5, 7 մասնակից՝ 4, 9 մասնակից՝ 3:

5.Թեմայի վերաբերյալ Ձեր գիտելիքներն այժմ – 14 մասնակից գնահատել է 5, 11 մասնակից `4

*(2)Վարողները*

6.Վարողները նյութը ներկայացնում էին հասկանալի ու մատչելի եղանակով - 23 մասնակից գնահատել է 5, 1 մասնակից՝ 4, 1 մասնակից չի պատասխանել:

7.Վարողները հաղորդակցվում էին մասնակիցների հետ ակտիվորեն - 23 մասնակից գնահատել է 5, 1 մասնակից՝ 4, 1 մասնակից չի պատասխանել:

8.Վարողները անդրադառնում էին մասնակիցների բոլոր հարցերին – 18 մասնակից գնահատել է 5, 5 մասնակից՝ 4, 1 մասնակից՝ 3, 1 մասնակից չի պատասխանել:

9.Վարողները մասնակիցներին հետաքրքրված էին պահել - 21 մասնակից գնահատել է 5, 3 մասնակից՝ 4, 1 մասնակից չի պատասխանել:

*(3)Վարման մեթոդները*

10.Նյութի ներկայացնելը Power point եղանակով - 17 մասնակից գնահատել է 5, 7 մասնակից՝ 4, 1 մասնակից չի պատասխանել:

11.Քննարկումները աշխատանքային խմբերում - 18 մասնակից գնահատել է 5, 3 մասնակից՝ 4 2 մասնակից՝ 3, 1 մասնակից՝ 2, 1 մասնակից չի պատասխանել:

12.Պլենար քննարկումները - 14 մասնակից գնահատել է 5, 8 մասնակից՝ 4, 2 մասնակից՝ 2, 1 մասնակիցչի պատասխանել:

*(4)Աշխատաժողովի բովանդակությունը*

13.Աշխատաժողովի թեման/բովանդակությունը վերաբերելի էր Հայաստանում ընթացող ներքին զարգացումներին 15 մասնակից գնահատել է 5, 6 մասնակից՝ 4, 3 մասնակից՝ 2, 1 մասնակից չի պատասխանել:

14.Աշխատաժողովի թեման/բովանդակությունը համապատասխանում է Ձեր աշխատանքին/

Չնայած մասնագիտությամբ տնտեսագետ եմ, իմ գործունեությամբ ավելի քիչ եմ առնչվում նման խնդիրներին, սակայն ես ինքս հանդես եմ գալիս հասարակության մասնիկ և չի բացառվում, որ ես ինքս կդառնամ խտրականության զոհ, այս աշխատաժողովը ավելացրեց իմ մտահորիզոնը և աշխարհայացքը փոխվեց ինչ-որ չափով այս ոլորտում:

գործունեությանը - 16 մասնակից գնահատել է 5, 7 մասնակից՝ 4, 1 մասնակից՝ 3, 1 մասնակիցչի պատասխանել:

15.Ես կկարողանամ անմիջապես պրակտիկայում օգտագործել ստացված տեղեկությունը - 14 մասնակից գնահատել է 5, 6 մասնակից՝ 4, 2 մասնակից՝ 3, 1 մասնակից՝ 2, 1 մասնակից՝1, 1 մասնակից չի պատասխանել:

*(5)Կազմակերպչական հարցեր*

16.Աշխատաժողովի անցկացման վայրում առկա էին Ձեզ անհրաժեշտ բոլոր հարմարությունները - 21 մասնակից գնահատել է 5, 4 մասնակից՝ 4:

17.Սարավորումները լավ աշխատանքային վիճակում են – 21 մասնակից գնահատել է 5, 4 մասնակից `4:

18.Աշխատաժողովի անցկացման վայրը հարմար է ուսուցման համար (օրինակ՝լուսավորություն, օդափոխության համակարգ և այլն) – 24 մասնակից գնահատել է 5, 1 մասնակից `4:

Մասնակիցները առաջարկել են հետամուտ լինել հետագա համագործակցությանը, ինչպես նաև քայլեր ձեռնարկել որպեսզի սեմինարները կրեն շարունակական բնույթ: Մասնակիցները նաև առաջարկել են ուշադրություն դարձնել փաստաբանների գիտելիքներին, նշել, որ նման ծրագրերի առկայությունը շատ կարևոր է հատկապես պետական կառույցների ներկայացուցիչների համար:

Բազմաբնույթ և հետաքրքիր սեմինար էր, ծավալուն ինֆորմացիա ստացա, հետաքրքիր մարդկանց հետ շփվեցի:Առաջարկում եմ, որ սեմինարները շարունակական բնույթ կրեն: Շնորհակալություն:

Մասնակիցները բարձրացրել են նաև նման քննարկումների համար անվտանգ միջավայր ստեղծելու անհրաժեշտության խնդիրը, որպեսզի «բոլորն իրենց ապահով զգան ու կարողանան բարձրաձայնել իրենց հուզող խնդիրների մասին»:





**Փորձագետները `**

Փորձագետների կողմից ներկայացվել են ՀՀ-ում հասարակության մեջ առկա խտրականության դրսևորումները և դրանց հետևանքները՝ ըստ ոլորտների:



Մարիետա Թեմուրյան
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ոլորտի փորձագետ



Զառա Հովհաննիսյան
Կանանց իրավունքների ոլորտի փորձագետ



Սերգեյ Գաբրիելյան
ԼԳԲՏ անձանց իրավունքների ոլորտի փորձագետ



Ռուբեն Սարգսյան
ՔԿՀ-ներում պատիժը կրող անձանց իրավունքների ոլորտի փորձագետ



Սյուզաննա Ղարացաշյան
Թմրամիջոց գործածող անձանց իրավունքների ոլորտի փորձագետ

**Փորձագետ-վարողներ՝**



Անահիտ Չիլինգարյան
Փորձագետ-վարող



Արայիկ Զալյան
Փորձագետ-վարող



Նունե Գրիգորյան
Վարող

**Օրակարգ**
**Հավասարության սկզբունքը և**
**խտրականության մարտահրավերները ՀՀ-ում**
Աշխատաժողով

**17.04.2015**

| | | |
|---|---|---|
| | 09:00-10:00 | Մասնակիցների ժամանում, գրանցում |
| | | |
| **1.** | 10:00 - 10: 30 | Բացման խոսք |
| | | Կ. Թումանյան. ՀՔԱՎ Խորհրդի նախագահ |
| **2.** | 10:30 -11:45 | Պլենար նիստ<br>Կարծրատիպեր, նախապաշարմունքներ, խտրականություն<br>Խտրականության տեսակները, միջազգային կարգավորումներ |
| | | Կներկայացվեն կարծրատիպերի և նախապաշարմունքների, որպես խտրականության հանգեցնող նախադրյալների ազդեցությունը և նշանակությունը: Խտրականության դեմ պայքարի շրջանակներում առկա միջազգային կարգավորումները:<br>Անահիտ Չիլինգարյան |
| | 11:45 - 12:15 | Սուրճի ընդմիջում |
| | | |
| **3.** | 12:15 - 13:00 | Պլենար նիստ<br>Խտրականության պաշտպանված հիմքերը, խտրականությունից պաշտպանության հնարավորությունները ներպետական օրենսդրության մակարդակում |
| | | Կներկայացվեն խտրականության պաշտպանված հիմքերը ինչպես նաև կներկայացվի թե ներպետական օրենսդրության մակարդակում խտրականության պաշտպանության ինչ միջոցներ են առկա, արդյոք ՀՀ օրենսդրությունը բավարար չափով ապահովում է խտրականության բոլոր ձևերից և բոլոր հիմքերով պաշտպանության բավարարար մեխանիզմներ, ինչ միջոցների կարող են ձեռնարկվել գործող մեխանիզմների շրջանակներում:<br>Ա. Զալյան |
| **4.** | 13:00 - 13:45 | Քննարկում աշխատանքային խմբերում<br>Իրավիճակային խնդիրների քննարկում |
| | | Մասնակիցները կբաժանվեն աշխատանքային խմբերի: Յուրաքանչյուր աշխատանքային խմբին կտրամադրվի մեկ իրավիճակային խնդիր: Աշխատանքային խմբերը պետք է քննարկեն խնդիրը և ներկայացնեն իրենց եզրակացությունը խտրականության առկայության/բացակայության վերաբերյալ, խտրականության ձևի վերաբերյալ:<br>Ա. Չիլինգարյան<br>Ա. Զալյան |
| | 13:45 - 14:45 | Ճաշ |
| | | |
| **5.** | 14:45 - 15:15 | Պլենար նիստ |

| | | |
|---|---|---|
| | | Իրավիճակային խնդիրների քննարկման արդյունքների ներկայացում |
| | | Աշխատանային խմբերը կներկայացնեն իրենց խմբի քննարկման արդյունքները և եզրակացությունը:<br>Ա. Չիլինգարյան<br>Ա. Ջալյան |
| **6.** | 15:15 - 16:15 | Պլենար նիստ<br>Պանելային քննարկում: Խտրականության դրսևորումները հասարակությունում |
| | | Պանելային նիստի ընթացքում փորձագետների կողմից կներկայացվի ՀՀ-ում հասարակության մեջ առկա խտրականության դրսևորումները և դրանց հետևանքները: Մասնավորապես կքննարկվեն հետևյալ խմբերի հանդեպ խտրականության դրսևորման հիմնախնդիրները՝ կանայք, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, թմրամիջոց գործածող անձինք, ԼԳԲՏ անձինք, քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձինք:<br>Պանելային քննարկումը կընթանա վարողի և աշխատաժողովի մասնակիցների կողմից յուրաքանչյուր ոլորտի փորձագետներին հարցեր տալու միջոցով:<br>Ն. Գրիգորյան /վարող/<br>Զ. Հովհաննիսյան<br>Ս. Գաբրիելյան<br>Ռ. Սարգսյան<br>Մ. Թեմուրյան<br>Ս. Ղարաղաշյան |
| | 16:15 - 16:45 | Սուրճի ընդմիջում |
| | | |
| **7.** | 16:45- 17:30 | Պլենար նիստ<br>Շահերի պաշտպանություն, ջատագովություն, փորձի և օրինակների ներկայացում |
| | | Նիստի ընթացքում կներկայացվեն շահերի պաշտպանության ծրագրերի իրականացման վերաբերյալ տեղեկատվություն: Կներկայացվեն խտրականության ոլորտում շահերի պաշտպանության հաջողված ծրագրերի օրինակներ:<br>Ա. Չիլինգարյան |
| **8.** | 17:30 - 18:00 | Քննարկում աշխատանքային խմբերում<br>Շահերի պաշտպանության ծրագրերի կազմում /աշխատանքային խմբեր/ |
| | | Արդեն իսկ կազմավորված աշխատանքային խմբերին կառաջարկվի քննարկել և ընտրել մեկ խնդիր, որի շրջանակներում կարող է իրականացվել կարծրատիպերի վերացմանն ուղղված շահերի պաշտպանության ծրագիր:<br>Ա. Չիլինգարյան |

| | | |
|---|---|---|
| **18.04.2015** | | |
| | | |
| | 09:30-10:00 | Նախաճաշ |
| | | |
| **9.** | 10:00 - 10:45 | Պլենար նիստ<br>Շահերի պաշտպանության ծրագրի գաղափարի ներկայացում<br>Քննարկում աշխատանքային խմբերում<br>Շահերի պաշտպանության ծրագրերի կազմում, շարունակություն |
| | | Նիստի ընթացքում աշխատանքային խմբերի կողմից կներկայացվեն այն խնդիրները, որոնց շուրջ նրանք առաջարկում և պատրաստվում են մշակել շահերի պաշտպանության ծրագիր:<br>Խնդիրների ներկայացումից հետո մասնակիցները աշխատանքը կշարունակեն խմբերում: Այս ընթացքում մասնակիցները պետք է մշակեն խնդրի լուծմանն ուղղված կոնկրետ գործողություններ և ներկայացնեն այդ գործողություններից և ծրագրից ակնկալվող արդյունքը:<br>Ա. Չիլինգարյան |
| **10.** | 10:45 - 11:30 | Պլենար նիստ<br>Շահերի պաշտպանության ծրագրերի ներկայացում(խնդիրներ, գործողություններ, ակնկալվող արդյունքներ) |
| | | Կներկայացվեն և կքննարկվեն խմբային աշխատանքների արդյունքները:<br>Ա. Չիլինգարյան |
| | 11:30 - 12:00 | Սուրճի ընդմիջում |
| | | |
| **11.** | 12:00 - 12:45 | Պլենար նիստ<br>Շահերի պաշտպանության ծրագրերի ներկայացում /շարունակություն/ |
| | | Կներկայացվեն և կքննարկվեն խմբային աշխատանքների արդյունքները:<br>Ա. Չիլինգարյան |
| **12.** | 12:45 - 13:15 | Պլենար նիստ<br>Աշխատաժողովի արդյունքների, հետագա անելիքների քննարկում |
| | | Կամփոփվեն աշխատաժողովի արդյունքները, մասնակիցները կներկայացնեն իրենց կարծիքները, նկատառումները աշխատաժողովի բովանդակության և ազդեցության վերաբերյալ, կլրացնեն գնահատման հարցաթերթիկները: |
| | 13:30 - 14:30 | Ճաշ, մեկնում |
| | | |